

## «Ֆինանսների նախարարություն

### Հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողով

Ո Ր Ո Շ ՈՒ Մ 1/6

15 հունվարի 2016 թ.

Քննարկվեց Ա/Ձ Նաիրա Նազարեթյանի գրությամբ բերված պահանջը հսկիչ-դրամարկղային մեքենա թյուրիմացաբար ավել մուտքագրված գումարներն իրացման շրջանառության մեջ չներառելու վերաբերյալ:

#### **Ա/Ձ Նաիրա Նազարեթյանի գրությամբ բերված փաստարկները.**

Ա/Ձ Նաիրա Նազարեթյանը հայտնում է, որ պետական գրանցում է ստացել 04.11.2011թ-ին և սկսել է գործունեություն ծավալել 2011թ-ի նոյեմբեր ամսից:

2011-2012թթ-ի համար հարկային տեսչություն է ներկայացրել բոլոր անհրաժեշտ հաշվետվությունները և հաշվարկները, իսկ 2013-2015թթ-ի ընթացքում համարվել է շրջանառության հարկ վճարող:

Սույն թվականի 18.11.2015թ-ին Գյումրու ՏՀՏ-ի կողմից 31006200 գրանցման համարի ՀԴՄ-ն գրանցումից հանելու ժամանակ պարզվել է, որ նշված ՀԴՄ-ի ֆիսկալ հասույթը 2014թ-ի 2-րդ եռամսյակին կազմել է 524.195.908 դրամ, որը չի համապատասխանում Ա/Ձ Նաիրա Նազարեթյանի կողմից փաստացի կատարված իրական շրջանառության ծավալներին:

Ա/Ձ Նաիրա Նազարեթյանը տեղեկացնում է, որ գրանցման պահից՝ 2011թ-ի նոյեմբեր ամսից, մինչև 2015թ-ի երրորդ եռամսյակն ընկած ժամանակաշրջանում իրացման շրջանառությունը կազմել է 13.970.000 դրամ, մասնավորապես՝ 2011թ-ին 410.000 դրամ, 2012թ-ին 2.516.900 դրամ, 2013թ-ին 3.787.900 դրամ, 2014թ-ին 4.310.000 դրամ, 2015թ-ի 9 ամիս 2.945.200 դրամ:

Գյումրու ՏՀՏ-ում պարզաբանել են, որ դրամական հաշվարկների կատարման ընթացքում սխալմամբ մուտքագրված գումարների գրանցման դեպքում պետք էր սխալ գրանցված արձանագրման ամսի ավարտից հետո մինչև հաջորդ ամսվա 25-ը ներառյալ ՏՀՏ ներկայացնել տվյալ ամսվա ընթացքում կատարված չեղյալ համարման, վերադարձի և գումարների սխալմամբ գրանցման մասին տեղեկանք:

Քանի որ նշված փաստի մասին անուշադրության և անհրազեկության պատճառով Ա/Ձ Նաիրա Նազարեթյանը իմացել է սխալ կատարելուց հետո ավելի քան մեկ տարի անց, ուստի հնարավորություն չունի օրենքի համաձայն սխալ մուտքագրված գումարների վերաբերյալ Գյումրու ՏՀՏ ներկայացնել վերոգրյալ տեղեկանքը:

Նկատի ունենալով վերոշարադրյալը՝ Ա/Ձ Նաիրա Նազարեթյանը խնդրում է սխալ մուտքագրված գումարը՝ 523.795.908 դրամի չափով, չներառել իրացման շրջանառության մեջ:

**ՀՀ ֆինանսների նախարարության հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողովի եզրակացությունը.**

ՀՀ ՖՆ հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողովը (այսուհետ նաև Հանձնաժողով), ուսումնասիրելով սույն գործին առնչվող նյութերն ու ապացույցները եկավ հետևյալ եզրակացության:

Քննարկման ընթացքում նշվեց, որ Ա/Ձ Նաիրա Նազարեթյանը (ՀՎՀՀ 6716843) գրառվում է մանրածախ առևտրով: 18.11.2015թ-ին նա դիմել է ՀՀ ՖՆ Գյումրու ՏՀՏ հսկիչ- դրամարկղային մեքենան գրանցումից հանելու համար (գրանցման համար՝ 31006200): ՀԴՄ-ն հաշվառումից հանելու հետ կապված համապատասխան գործողությունների իրականացման արդյունքում պարզվել է, որ 17.05.2014թ.-ին ՀԴՄ է մուտքագրվել 79.637.553 դրամ, իսկ 24.05.2015թ.-ին՝ 444.526.075 դրամ: Նշված գումարները ՀԴՄ են մուտքագրվել թյուրիմացաբար, որը հայտնի է դարձել միայն հսկիչ-դրամարկղային մեքենան գրանցումից հանելու ժամանակ: Արդյունքում, ՀՀ կառավարության 26.03.2015թ.-ի «Հսկիչ-դրամարկղային մեքենաների շահագործման կանոնները հաստատելու մասին» N379-Ն որոշմամբ հաստատված հավելվածի 19-րդ կետի 5-րդ ենթակետով սահմանված ժամկետում Ա/Ձ Նաիրա Նազարեթյանը չի ներկայացրել չեղյալ համարման, վերադարձի և գումարների սխալմամբ գրանցման մասին տեղեկանքը:

Քննարկվող դեպքում Ա/Ձ Նաիրա Նազարեթյանի կողմից չի պահպանվել ՀՀ կառավարության 26.03.2015 թ-ի թիվ 379-Ն որոշմամբ հաստատված հսկիչ-դրամարկղային մեքենաների շահագործման կանոններով նախատեսված ընթացակարգը, քանի որ սխալմամբ մուտքագրված գումարների գրանցման մասին տեղեկացել է միայն հսկիչ-դրամարկղային մեքենան գրանցումից հանելու ժամանակ:

Միևնույն ժամանակ, Ա/Ձ Նաիրա Նազարեթյանի կողմից 17.05.2014թ.-ին 79.637.553 դրամ և 24.05.2015թ.-ին՝ 444.526.075 դրամ գումարները սխալմամբ մուտքագրված լինելու մասին է վկայում այն հանգամանքը, որ նրա կողմից շահագործվող խանութի մակերեսը կազմում է 12 ք.մ., ապրանքային մնացորդը չի գերազանցում 500.000 դրամը, իսկ ամսեկան շրջանառությունը՝ 250.000 դրամը:

Հանձնաժողովի համոզմամբ, սովյալ դեպքում գործ ունենք մի իրավիճակի հետ, երբ Ա/Ձ Նաիրա Նազարեթյանի կողմից վերոգրյալ գումարները մուտքագրվել են թյուրիմացաբար, այն մեխանիկական սխալի արդյունք է: Հետևապես, սխալմամբ մուտքագրված գումարների մասին ուշ տեղեկանալը և ՀՀ օրենսդրությամբ սահմանված ընթացակարգով այդ մասին արձագանքելու ժամկետի բաց թողնվելը, ըստ էության, չեն կարող հիմք հանդիսանալ վերոգրյալ գումարները Ա/Ձ Նաիրա Նազարեթյանի իրացումից հասույթի ընդհանուր գումարի մեջ ներառելու համար:

Ելնելով քննարկման արդյունքներից և ղեկավարվելով «Հարկային ծառայության մասին» ՀՀ օրենքի 43.1-րդ հոդվածի և «Մաքսային ծառայության մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի պահանջներով հանձնաժողովը

**ո թ ո շ ու մ է՝**

Ա/Ձ Նաիրա Նազարեթյանի գրությամբ բերված պահանջը՝ հսկիչ-դրամարկղային մեքենա թյուրիմացաբար ավել մուտքագրված գումարներն իրացման շրջանառության մեջ չներառելու վերաբերյալ, բավարարել:

**Հանձնաժողովի նախագահ՝**



**Վ.ՄԻՐՈՒՄՅԱՆ**